ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ո՞ՐՆ ԵՆ ՄԵՐ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Օգնություն տրամադրել այն անձանց, որոնք ուղղակի (որպես բռնության զոհ), կամ անուղղակի կերպով (օրինակ. որպես վկա, կամ ընտանիքի վնասված անդամի միջոցով), առնչվում են որեվէ հանցագործության հետ, ինչի հետեւանքով այնպիսի վիճակի մեջ են ընկնում, որ հետեւանքների հաղթահարման համար օգնության անհրաժեշտություն են զգում: Բնական մարդկային հակազդումի պատճառով, զոհերի մոտ առաջանում են առողջական, հոգեկան եւ ֆինանսական բնույթի դժվարություններ:. Հենց այսպիսի դեպքերի փարատման նպատակով է գործում **ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ:**

ՈՒ՞Մ ԵՆՔ ԿԱՐՈՂ ՕԳՆԵԼ

Ծառայությունը օգնում է առաջին հերթին Հունգարիայում հանցագործության, կամ ունեցվածքային ապօրինության զոհ դարձաց անձանց:

ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՆՔ ՕԳՆԵԼ

ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ հանցագործության, կամ ունեցվածքային ապօրինության զոհ դարձաց անձանց համար՝

- բացատրություններ է տալիս զոհերին իրենց իրավունքների, եւ ծագած դժվարությունների մեղմացման հնարավորությունների մասին.
- հոգեկան օգնություն է ցուցաբերում.
- օգնում է իրականացնել տվյալ անձի իրավունքները.
- իրավաբանական օգնություն է ցուցաբերում, կամ, անհրաժեշտության դեպքում, ապահովում են գործն վարելու նպատակով փաստաբան.
- պատահածից հաշված հինգ օրվա միջոցում, տուժողի կողմից տրված խնդրանքի համաձայն, ճգնաժամային վիճակի դեպքում, կարող է ապահովել անհապաղ դրամային օգնություն:

Բռնի հանցագործությունների հետեւանքով զոհերին պատճառած ծանր առողջական հետեւանքները մեղմացման նպատակով, կամ տուժվողի մահվան դեպքում, ընտանիքի անդամները, բացի վերը նշված օգնությունները ստանալու հնարավորություններից, կարող են դիմել պետական փոխհատուցման խնդրանքով: Թվարկված նպաստներով կարելի է օգտվել առանց որեվէ փոխհատուցման:

Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ «ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ» ՕԺԱՆԴԱԿՈՒՄ

Բռնության զոհերին օգնություն տրամարող ծառայությունը տուժվողներին տեղեկացնում է իրենց հիմնական իրավունքների մասին հաշվի առնելով գործի անձնական կապակցությունները, զոհին հասանելիք առողջական եւ սոցիալական սպասարկումը: Անհրաժեշտության դեպքում ծառայության աշխատակիցները օգնում են զոհերին այլ պետական ծառայությունների եւ գործակալությունների հասցեյով պաշտոնական դիմումների ձեւակերպմանը, կամ համապատասխան պաշտոնական անձանց հետ կապերի հաստատմանը, բացի այդ կողոպտված փաստաթղթերի անվճար փոխհատուցման իրականացմանը. Մեր գործակալության համարյա բոլոր տարացքային ծառայությունները հանցագործության հետեւանքով կայացած հոգեկան ցնցման հետեւանքների վերացման նպատակով առաջարկում են հոգեբանի օգնություն.

ԻՆՉԻ՞Ն Է ԾԱՌԱՅՈՒՄ ԱՆՀԱՊԱՂ ԴՐԱՄԱՅԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Բռնության զոհերի համար հանցագործությունից հետո կենսական պահանջ է ներկայանում հիմնական կենսական հարցերի ապահովվությունը: Այդ բանի համար Բռնության Զոհերին Օգնություն Տրամարող ծառայությունից հնարավոր է անհապաղ ստանալ դրամական օգնություն՝ բնակվելու, հագնվելու, երթեւեկելու, սնվելու, բացի այդ դեղամիջոցների եւ, հարկավորության դեպքում, թաղման հետ կապված ծախսերի նպատակով: Այս օգնությունը չի նշանակում հանցագործության հետեւանքով կորցված, կողոպտված, ոչնչված արժեքների փոխհատուցում: Դրամական օգնությունով, Բռնության Զոհերին Օգնություն Տրամադրող Ծառայությունը փորձում տվյալ անձի համար ստեղծված ճգնաժամային վիճակը բուժել անհատական մոտեցման միջոցներով:

ԻՆՉՊ՞Ս ԿԱՐՈՂ ԵՔ ԿԱՊՎԵԼ ՄԵԶ ՀԵՏ

Եթե Դուք բռնության զոհեք դարձել, կապվեք մեզ հետ օրվա յուրաքանչյուր ժամին **անվճար 06-80-225-225** հեռախոսային համարով, կամ տարածքային բռնության զոհերին օգնություն տրամադրող ծառայության հետ այս գրության հակառակ կողմում նշված հեռախոսային համարներով: Մեր աշխատակիցները բոլոր դիմողներին տեղեկացնում են ծառայության կողմից մատուցվող հնարավորությունների եւ նրանց հասանելիության ձեւի մասին: Առանձին մարզերում տարածքային բռնության զոհերին օգնություն տրամադրող ծառայություններում այնպիսի հնարավորություն կա, որով, համաձայն դիմողի խնդրանքի, օգնության է ուղարկում կամավոր աշխատակիցներին, որոնք տուժողի հետ համաձայնացված ժամանակին այցելում են նրան իր բնակարանում, օգնություն ցուցաբերելու եւ անհրաժեշտ փաստաթղթեր ձեւակերպելու նպատակով:

Ի՞ՆՉ Է ՊԵՏՔ, ՈՐ ԿԱՐՈՂԱՆԱՆՔ ՁԵԶ ՕԳՆԵԼ

Մեր աշխատակիցները, համաձայն Ձեր դեպքի նկարագրության, արդեն հեռախոսով տեղեկացնում է ձեզ այն մասին, որ ինչպիսի գրություններ, տեղեկանքներ եւ վկայություններ է պետք ներկայացնել գործի լուծման եւ **ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ** կողմից օգնություն ստանալու համար:

Եթե Դուք, որպես բռնության զոհ, դեռ չեք հայտնել դեպքի մասին ոստիկանությանը, մեր աշխատակիցները այդ բանում էլ կօգնեն Ձեզ, քանի որ հետագա քայլերը անելու համար անհրաժեշտ է քրեական գործի բացման մասին ոստիկանության կողմից տրված տեղեկանքը: Այդպիսի տեղեկանք, համաձայն բռնության զոհի իրավունքների, ոստիկանությունը պարտավոր է անհապաղ կազմել բռնության զոհի խնդրանքով, ամենա ուշը

մեկ օրվա միջոցում:

ԴԻՄԻ՛Ր ՄԵԶ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՄԲ

ԶՈՀԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՌԱԽՈՍՆ Է

06 80 225 225